

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԴԿ-ԳՀԱՇՁԲ-17/18**

ք. Երևան

<<13>> հոկտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՓԱՐՎԱՆԱ>> ԱԿ-ն, ի դեմս տնօրեն Գ. Բեյքոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Շիրակի մարզի Սպանդարյան գյուղի համայնքային մարզադաշտի հողային աշխատանքների, բարեկարգման, ցանկապատման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 2017թ. համար նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվող աշխատանքների համար կատարման ժամկետ է սահմանվում՝ 30.11.2017թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական աշխատանքների կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքների թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4.2 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **38 200 000** (երեսունութ միլիոն երկու հարյուր հազար, այսուհետ՝ պայմանագրի ընդհանուր գումար) << դրամ, որից **6 366 667** (վեց միլիոն երեք հարյուր վաթսուներեք հազար վեց հարյուր վաթսուներեք) << դրամ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Սույն պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետում Կապալառուի կողմից N 1.1 հավելվածով նախատեսված՝ նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան իրականացվելիք աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է **14 181 295** (տասնչորս միլիոն մեկ հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր ինսուսուսինգ, այսուհետ՝ պայմանագրային գումար) << դրամ, որից **2 363 549** (երկու միլիոն երեք հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր քառասունհինգ) << դրամ ԱԱՀ-ն:

5.1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագրի կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

$ՎԳՏ = ՄԳ / ՆԳ \times ԾԳՏ \times Ծ$, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

Սույն պայմանագրում $ՄԳ / ՆԳ = 0.833031$:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի

ՇԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԳՅՈՒԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ՑԱՆԿԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN ը/կ	Գիմնավորում	Աշխատանքի անվանումը	Չափ. միավ.	Քա- նակ	1 միավ. ընդ.արժ. հազ.դր.	Ընդհա- նուր ար- ժեքը հազ.դր.
1	2	3	4	5	6	7
1. Հողային աշխատանքներ						
1	1-1551	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավ, 0,5մ ³	1000մ ³	0.043	473.05	20.34
2	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ ³	3.00	2.07	6.22
3	1-1634	2 - րդ կարգի բնահողի ետլիցք մեխանիզմով	1000մ ³	0.022	53.75	1.18
4	1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	մ ³	3.00	0.87	2.60
5	1-995	Բնահողի ետլիցք հատակների տակ	100մ ³	0.093	143.43	13.34
2. Հիմքեր						
1	6-21	Բուտաբետոնե հիմքերի կառուցում 4-7,5 դասի բետոնից	մ ³	20.80	31.748	660.36
2	8--13	Հիմքերի ջրամեկուսացում ցեմ/շաղախով	100մ ²	0.066	161.54	10.66
3. Պատեր						
1	15-35 15-59 տեխ. մաս կետ 1.5	Ուրմնախարիսի կրեապատում 30 սմ հաստ. բազալտե սալիկներով 6,1-(0.08*7), 0.16-(0.005*7), 12.6-(0.15*7)	մ ²	32.80	16.95	555.96
2	8-140	Պատերի կառուցում 20 սմ հաստ. թեթև բետոնե բլոկից	մ ³	16.80	19.55	328.39
3	8--59	Պատերի ամրանավորում Ա-1, Փ8	տն	0.122	399.19	48.70
4	8-150	Թեթև բետոնե բլոկներից ծակոտիների լցում բետոնով	մ ³	11.90	31.30	372.52
5	Շուկա	Ամրան ,Ա - 1 դասի Փ8	տն	0.328	343.10	112.54
6	Շուկա	Ամրան ,Ա - 1 դասի Փ6	տն	0.0477	343.10	16.37
7	6-106	Ե/բ միաձույլ միջուկների կառուցում 4 - 15 բետոնից ՍՄիջ-1, ՍՄիջ-2,	մ ³	1:32	79.27	104.63
8	Շուկա	Ամրան Ա - 1 դասի Փ6	տն	0.0330	343.51	11.34
9	Շուկա	Ամրան Ա - 3 դասի A 500Շ14	տն	0.2074	337.35	69.97
10	6-168	Ե/բ միաձույլ գոտու կառուցում 4-15 դասի բետոնից Գ-1, Գ-2, Գ-3, Գ-4	մ ³	3.39	57.05	193.41

11	Շուկա	Ամրան Ա-1 Փ6	տն	0.0963	343.10	33.04
12	Շուկա	Ամրան A 500C-12մմ	տն	0.1718	336.95	57.89
13	6-170	Ե/բ միաձույլ բարավորի կառուցում Վ-15 դասի բետոնից ՄԲ-1, ՄԲ-2,	մ ³	0.460	72.42	33.31
14	Շուկա	Ամրան Ա-1Փ6	տն	0.0132	343.10	4.53
15	Շուկա	Ամրան Ա-3 -A 500CՓ12 մմ	տն	0.0207	336.95	6.97
16	Շուկա	Ամրան Ա-3 -A 500CՓ14մմ	տն	0.0442	336.95	14.89
4. Միջնորմներ						
1	10-279	Միջնորմի կառուցում երեսպատելով գիպսետվարաթղթով 1շերտ 106 մմ հաստ, մեկուսացմամբ, ջրակայուն	100մ ²	0.1966	662.58	130.26
5. Տանիք						
1	12-289	Գոլորշամեկուսացում ռուբերոիդով	մ ²	48.60	1.72	83.48
2	26-43	Ջերմամեկուսիչ շերտի կառուցում հանքային բամբակից 5 սմ հաստ, $20-30կգ/մ^3$ $V=48,6*0,05=2,43$	մ ³	2.43	28.15	68.40
3	Շուկա	Չորսու 100*50մմ	մ ³	0.34	160.41	54.54
4	10-70.	Ծպեղնատղի տեղադրում (մարթակ, կանգնակ, մաուերլատ, թեքան)	մ ³	1.177	204.57	240.78
5	12-404	Տանիքի ծածկի կառուցում թերթ.ցինկ. քիթելից առանց ջրհորդանի և կավարամածի ԿՊ-21-0,55	100մ ²	0.695	446.63	310.41
6	Շուկա	Ինքնաշաղաթող հեղուս-6 հատ	հատ	383.0	0.02	8.93
7	Շուկա	Չորսու /կավարամած/50*50	մ ³	0.53	160.22	84.92
8	10-201	Փայտե կարկասի հակահրդեհային լաքապատում	մ ³	1.18	5.87	6.91
9	10-203	Կավարամածի հակահրդեհային լաքապատում	100մ ²	0.695	23.018	16.00
6. Հատակներ						
1	11-2.	Բնահողի տոփանում խճով /15-20մմ/	100մ ²	0.4732	28.3716	13.43
2	11-11.	Թ/Բետոնե նախաշերտի կառուցում 120մմ հաստ,	մ ³	5.72	28.96	165.63
3	11-55 11-56	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 40մմ հաստ.	100մ ²	0.4732	148.40	70.22
4	Շուկա	Ամրանային ցանց Վո-1, Փ4/150*150/	մ ²	47.32	0.80	38.04
5	11-135	Հատակների կառուցում սալիկներից/ /Սամլո-գրամիտ սալ /400*400սսսիմմ - 4մմհատ	100մ ²	0.430	854.94	367.62
6	11-18	Ջրամեկուսացում ռուբերոիդի 1շերտիտումի մածիկով կերամիկական հատակների տակ/	100մ ²	0.0432	286.54	12.38
7	11-135	Խեցեսալե հատակների կառուցում 60*60 մմ	100մ ²	0.0432	630.42	27.23
7. Բացվածքներ						
1	Շուկա	Մետաղապլաստե խուլ դռան տեղադրում 6 սմ (օտար պրոֆիլ, սպիտակ գույն)Ղ-1,2,3	մ ²	14.70	40.46	594.77
2	Շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում /բացվող/ (օտար.պրոֆիլ,սպիտակ) 60 մմ հաստ,4+4 ապակեփաթեթ, Պ-1,Պ-2,	մ ²	2.88	35.27	101.59

8. Դարդարման աշխատանքներ						
1	15-247-1	Առաստաղի սվաղում գաջի շաղախով բարելավված որակի	100մ ²	0.4458	242.30	108.02
2	15-246-1	Պատերի սվաղում գաջի շաղախով բարելավված որակի/ց	100մ ²	1.0076	203.61	205.16
3	15-660	Պատերի ներկում լատեքսով բարելավված որակի կիսափայլուն	100մ ²	1.0076	118.74	119.65
4	15-661	Առաստաղի ներկում լատեքսով բարելավված որակի կիսափայլուն	100մ ²	0.4458	130.72	58.27
5	15-256	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով	100մ ²	0.4622	147.15	68.01
6	15-82	Պատերի երեսպատում կերամիկական սալիկներով սոսինձի վրա - 4 մմ	100մ ²	0.4622	616.61	285.00
7	4-85վ	Առաստաղների երեսպատում զիպսոկար-տոնից փայտե կարկասի կառուցմամբ	100մ ²	0.0321	822.97	26.42
8	15-257	Առաստաղի սվաղում ց/ավազային շաղախով	100մ ²	0.0321	152.37	4.89
9	15-201	Արտաքին պատերի սվաղում ց/ա շաղախով	100մ ²	1.050	137.38	144.25
10	15-521	Արտաքին պատերի ներկում ճակատային ներկով	100մ ²	1.050	77.94	81.84
9. Սալվածք						
1	11-2.	Բնահողի տոփանում խճով 15-20 մմ	100մ ²	0.340	21.2403	7.22
2	11-6.	խճի նախաշերտի կառուցում 100մմ հաստ,	մ ³	3.400	10.9936	37.38
3	27-169	Սալվածքի ծածկույթ մանրահատիկ ասֆ/ քետոնից 30մմ հաստ. **Դ** տիպ	100մ ²	0.34	241.325	82.05
4	27-78	Բետոնե հավաքովի եզրաքարերի տեղադրում 200*80մմ	մ	34.0	4.554	154.85
ԸՆԴԱՄԵՆԸ						6457.70
Ջրի և կոյուղու տեղամաս						
1	16-260	Պոլիպրոպիլենային խողով .d=20 մմPN10	մ	12.0	2.413	28.95
2	16-261	Պոլիպրոպիլենային խողով .d=25 մմPN10	մ	5.0	2.008	10.04
3	16-34	Պոլիվինիլքլորիդե խող.տեղադրում d=110մմ	մ	21.0	1.707	35.84
4	16-33	Պոլիվինիլքլորիդե խող.տեղադրում d=50մմ	մ	14.0	1.037	14.52
5	17-22	Լվացարանի տեղադրում ոտնակով	կ-տ	2.0	15.716	31.43
6	17-62	Զուգարանակոնքի տեղադրում բաքիկով	կ-տ	4.0	27.184	108.74
7	16-134	Փականների տեղադրում d=15 մմ	հատ	2.0	3.408	6.82
8	Ե16-130	Լվացարանի ծորակի տեղադրում d=15մմ	հատ	2.0	6.543	13.09
9	Ե16-130	Զուգարանի ծորակի տեղադրում d=15մմ	հատ	4.0	4.116	16.46
10	17-35	Տակդիրի տեղադրում	կ-տ	2.00	9.432	18.86
11	17-49	Ցնցուղի խառնիչի տեղադրում d=15մմ	հատ	2.0	8.245	16.49
12	Շուկա	կցամաս պտտտակով 16 / 1/2	հատ	2.0	0.478	0.96
13	Շուկա	Անցում 25/20	հատ	2.0	0.041	0.08
14	Շուկա	Եռաբաշխիչ 20*20*20 /պոլիպ/	հատ	3.0	0.056	0.17
15	Շուկա	Արտուղղում d=20մմ /պոլիպ/	հատ	3.0	0.034	0.10
16	22-395	Յ/հ հիդրանտի տեղադրում	հատ	2.00	113.666	227.33
ԸՆԴԱՄԵՆԸ						529.88

Ներքին էլ. լուսավորություն

1	8-526-1	Խմբային վահան /պլաստմասե արկղ/3 տեղանոց	հտ	1.0	4.373	4.37
2	8-525-1	Եռաբևեռ ավտոմատ անջատիչ 25Ա	հտ	1.0	3.268	3.27
3	8-525-1	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 32 Ա	հատ	1.0	2.676	2.68
4	8-525-1	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 10 Ա	հատ	1.0	2.676	2.68
		Ներքին լուսավորություն				0.00
1	8-599-1	Լյումենեսցենտային լուսատուի տեղադրում	հատ	10.0	5.829	58.29
		LՊՕ - 2*36W				0.00
2	8-604-1	Էլեկտրական լուսատուի տեղադրում 1x20W էկոնոմ լամպով	հատ	6.0	3.04	18.26
3	Շուկա	էկոնոմ լամպ 220Վ 20w	հատ	6.0	0.87	5.25
4	8-591-2	էլեկտրական անջատիչ միաստեղ միաբևեռ	հատ	7.0	0.813	5.69
5	8-591-2	էլեկտրական անջատիչ երկստեղ միաբևեռ	հատ	5.0	1.380	6.90
6	8-591-7	Երկբևեռ վարդակ ՍԻ-220Վ, երրորդ հողանցման կոնտուրով, 16 Ա	հատ	8.0	1.606	12.85
7	10-975-8	Տուփ անջատիչների	հտ	20.0	0.973	19.45
8	10-975-8	Տուփ բաժանարար	հտ	4.0	1.031	4.12
9	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՎՔ 2*2.5մմ ²	100 մ	1.05	45.063	47.32
10	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՎՔ 3*2.5մմ ²	100 մ	0.30	60.229	18.07
11	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՎՅ 1*2.5մմ ² լուսատուների լիցքավորման համար	100 մ	0.25	35.730	8.93
		ԸՆԴԱՄԵՆԸ				218.13
		Արևային տաք ջրամատակարարում				
		Արևային տաք ջրամատակարարում				
1	9-33	Մետաղական սյուների մոնտաժում քառանկյուն խողովակներից	տն	0.2048	90.80	18.60
2	Շուկա	Քառանկյուն խողովակ 70*70*4 մմ	տն	0.2048	407.84	83.52
3	9-94	Մետաղական մարթալ տաշտածև հեծանից	տն	0.108	56.665	6.12
4	Շուկա	Տաշտածև հեծան 10	մ	12.00	3.71	44.58
5	9-82	Մետաղական կապերի մոնտաժում մետաղական խողովակից ,անկյունակից	տն	0.1493	100.38	14.99
6	Շուկա	Մետաղական քառ, խողովակ 40*40*4 մմ	մ	16.00	0.965	15.44
7	Շուկա	Անկյունակ 50*50*5	մ	25.6	1.659	42.48
8	15-613	Մետաղական կոնստրուկցիաների յուղաներկում անգամ 2-	100մ ²	0.104	71.52	7.44
		Արևային տաք ջրամատակարարում				0.00
1	18-102	Արևային պանելային մարտկոց 2մ ²	հատ	4.00	142.2	568.64
2	18-102	Բոյլեր BP 300 300լ	հատ	1.00	354.3	354.32
3	18-133	Մեմբրանային ընդարձակման բաք V=30լ	հատ	1.00	21.8	21.78
4	18-133	Դրենաժային ընդարձակման բաք V=20լ	հատ	1.00	18.28	18.28
5	16-134	Ապահովիչ փական d=25 մմ	հատ	1.00	5.61	5.61
6	16-134	Ապահովիչ կափույր Φ 20մմ	հատ	1.00	4.67	4.67
7	18-166	Շրջանառու պոմպի տեղադրում G=3.0մ ³ /ժամ, H=4 մ, N=0.30 կՎՏ	հատ	1.00	41.04	41.04

8	18-166	Շրջանառու պոմպի տեղադրում G=2.0մ3/ժամ, H=4 մ, N=0.30 կՎՏ	հատ	1.00	26.59	26.59
9	16-130	Ավտոմատ օդահեռացման ծորակ	հատ	1.00	4.73	4.73
10	16-130	Փական d=20մմ	հատ	6.0	3.84	23.03
11	11-134	Հետադարձ կափույրի տեղադրում d=20մմ	հատ	1.0	4.85	4.85
12	16-261	Պոլիպրոպիլենային խողով. d=25 մմPN10	մ	12.0	2.206	26.47
13	16-261	Պղնձե խողով. d=25 մմPN10	մ	8.0	4.539	36.31
14	16-219	Խողովակաշարի փորձարկում	100մ	0.20	7.19	1.44
		ԸՆԴԱՄԵՆԸ				1370.91
		Ճուտորդի դաշտ				
1	Պայմանագիր	Դարպասներ	հատ	2.000	200.74	401.47
1	Պայմանագիր	Ցանցեր	հատ	2.000	40.15	80.29
2	Պայմանագիր	Մարզադաշտի աշտարակ	կոմպ	4.000	376.38	1505.52
2	Պայմանագիր	Մարզադաշտի էլյուսավորության լուսարձակ	կոմպ	4.000	238.37	953.50
3	Պայմանագիր	Մարմն. նստարան 2մ	հատ	4.00	18.82	75.28
4	Շուկա	Պահարան հանդեր-ծարան 13 հատ	հատ	2.0	57.71	115.42
5	Շուկա	Աթոռ մարզադաշտի տրիբունայի համար	հատ	120.0	8.78	1053.86
6	Շուկա	Հովար մարզադահլիճի տրիբունայի համար	մ ²	45.0	11.54	519.40
7	Շուկա	Կիսափափուկ աթոռ	հատ	16.000	12.55	200.74
		ԸՆԴԱՄԵՆԸ				4905.49
		Մարզադաշտ				
1	1-1609 1-1616	Բնահողի մշակում բուլղոզերով 3-կարգ տեղափոխելով 50 մ 51,8+39*4=207,8	1000մ ³	0.4780	550.20	263.00
2	1-1609 1-1616	Նույնը , ցանկապատից առաջացած բնահողի	1000մ ³	0.1000	550.20	55.02
3	1-1593	Բնահողի մշակում երևակա, բարձելով ա/ինքնաթափին , 3-կարգ /պակասող բնահող/	1000մ ³	0.0472	576.74	27.22
4	Գ310-2	Ներկրում 2 կմ-ից /պակասող բնահող/	տն	80.24	0.953	76.48
5	1-1634	Բնահողի ետլիցք բուլղոզերով	1000մ ³	0.6252	56.293	35.19
6	1-1161 1-1164 Գ=5	Լիցքի խտացում/5տն գլրոնով/ 5 անցումով G=9+1,3*4=14,2	100մ ³	6.252	26.783	167.45
7	1-1186	Տոփամվով բնահողի ջրում	100մ ³	6.252	23.694	148.14
8	1-1591	Բուսահողի մշակում երևակա, բարձելով ա/ինքնաթափին 1-ին կարգ	1000մ ³	0.432	375.866	162.37
9	Գ310-2	Ներկրում 2 կմ-ից	տն	518.4	0.953	494.14
10	1-1634	Բնահողի ետլիցք բուլղոզերով , 80մմ հաստ,	1000մ ³	0.432	56.293	24.32

11	1-1161 1-1164 q=5	Լիցքի խտացում/5տն գլղոնով/ 2 անցումով G=9+1,3=10,3	100մ ³	4.320	19.427	83.92
12	1-1186	Տոփանվող բնահողի ջրում	100մ ³	4.320	23.694	102.36
13	48-214	Խաղաղաշտի ցանում բուսական շերտի վրա	100մ ²	54.00	20.64	1114.56
		ԸՆԴԱՄԵՆԸ				2754.18
		Սիզամարզեր				0.00
1	48-167	Սիզամարզերի ցանքի տեղի նախապատրաստում	100մ ²	28.00	22.03	616.88
2	48-214	Սիզամարզերի ցանում բուսական շերտի վրա	100մ ²	28.00	7.36	206.20
		Ցամաքուրդ(Դրենաժ)				
1	23-1	Կավե փական 100մմ	մ ³	7.00	1.91	13.40
2	38-8	Ֆիլտրող շերտի ստեղծում	մ ³	21.00	0.17	3.56
3	Շուկա	Ավազե ֆիլտր 100մմ 0.8-2.0մմ	մ ³	7.00	1.94	13.56
4	Շուկա	Խճե ֆիլտր 100մմ, 10 - 20մմ	մ ³	7.00	1.53	10.71
5	Շուկա	Խճե ֆիլտր 100մմ, 50 - 70մմ	մ ³	7.00	4.89	34.26
		Տարածքի բարեկարգում				
1	11-2.	Բնահողի տոփանում խճով 15-20 մմ	100մ ²	8.5	20.76	176.50
2	27-43	Խճի նախաշերտ 12 սմ հաստ, բիտումի տարածումով 4,12/1000մ ² (բազալտե խիճ)	100մ ²	8.50	205.39	1745.84
3	27-164-2	Ծածկի վերին շերտի իրականացում H=4սմ խոշորահատիկ ա/բետոնե խառնուրդից	100մ ²	8.50	311.90	2651.14
		ԸՆԴԱՄԵՆԸ				5472.04
		Սետաղական ցանկապատ ըստ 4-5:				
1	7-320 q=0,3	Սետաղական ցանկապատի կառուցում ցանցից 9,0մ բարձր, ըստ 4-5, L=81,0մ	մ	81.00	0.72	58.11
3	Շուկա	Խողովակ 140*100*5	տն	1.9253	414.83	798.67
4	Շուկա	Խողովակ 100*60*5	տն	0.3470	414.83	143.95
5	Շուկա	Անկյունակ 20*20*4	տն	0.7452	368.22	274.40
6	Շուկա	Ցանց 2,0մմ , 70*70 մմ	մ ²	370.0	0.48	175.91
7	Շուկա	Թերթավոր պողպատ 120*60*6մմ ,160*100*6մմ	տն	0.01287	448.29	5.77
8	Շուկա	Ամրան Փ14 Ա-3,կցորդիչ	կգ	57.6	0.34	19.41
9	15-613	Սետաղե ցանկապատի յուղամերկում 2-անգամ	100մ ²	3.700	71.52	264.63
10	15-613	Սետաղական խողովակների յուղամերկում անգամ 2-	100մ ²	0.741	71.52	53.00
		Սետաղական ցանկապատ ըստ 1-7-6:				
1	7-320 q=0,3	Սետաղական ցանկապատի կառուցում ցանցից 4,5մ բարձր, ըստ 1-6-7, L=83,26 մ	մ	83.26	0.72	59.73
3	Շուկա	Խողովակ 100*60*5	տն	1.0917	414.83	452.87

4	Շուկա	Անկյունակ 20*20*4	տն	0.5172	368.22	190.44
5	Շուկա	Ցանց 2,0մմ , 70*70 մմ	մ ²	288.1	0.48	136.97
6	Շուկա	Թերթավոր պողպատ 120*60*6մմ	տն	0.0088	448.29	3.94
